Քանի կեանք ունէր, նա ազատ ապրեց,
Սուր պողը նորան այդ օրի՞ն հասցրեց..
Բայց թէ եղը զուրկ լինէր պողերից,
Որոնցով փրկեց իւր կեանքը մահից.
Ո՞ր բան կը տանջուէր ծանր լծի տակ,
Եւ կամ կ'լինէր թուրքից շան—սատակ.
. . . . . .
. . . . . .

ԱՂԷՔՍԻ· ԱՐԱՐԱՏԵԱՆՑ:

ԱԶԳԱՑԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.

Ամսոյս 4-ին յետ կէսաւուր ժամը 6½-ին ժամանեց ի Մայր Աթոռս Բեսսարաբիոյ եւ Նոր—Նախիջեւանի թեմի Վիճակաւոր Առաջնորդ Գերապատիւ Մակար Արքեպիսկոպոսը: Նորին Բարձր Սրբազնութեան ընդունելութիւնը թէ Էջմիածնի Միաբանութեան, թէ տեղական Ռատիկանութեան եւ թէ Վաղարշապատի ժողովրդեան կողմից կատարուեցաւ արժանավայելուչ հանդիսիւ:

Մինչեւ Երեւան Միաբանութեան կողմից ընդառաջել էին Նորին Բարձր Սրբազնութեանը Անդամ Սինոդի—Գերապատիւ Մեսրոպը եւ Ներսէս Եպիսկոպոսներն ու բարեշնորհ Սարգիս եւ Դեւոնդ Վարդապետները: Նորին Բարձր Սրբազնութեանն սպասումէին Երեւանում նմանապէս Վաղարշապատի Պ. Գաւառապետի Օգնականը մի խումբ ռատիկաններով եւ Վաղարշապատի գիւղապետ պ. Գեղամեանցը բազմաթիւ ձիաւոր երիտասարդներով: Իսկ գիւղի հասարակութիւնը մեծ ու փոքր ծածկել էին ամբողջ հրապարակն ու փողոցը, որի միջով պէտք է անցնէր Նորին Բարձր Սրբազնութեան կառքը: Միաբանութեան Ուխտը եւ ճեմարանի Տեսուչն ու Ուսուցչաց խումբը Նորին Բարձր Սրբազնութեանն ընդունեցին Էջմիածնի արտաքին պարսպի հիւսիսային մեծ դրան առաջ. իսկ ճեմարանի ուսանողք եւ աշակերտք ներքին պարսպի արեւմտեան մեծ դռնից մինչեւ Տաճարի դուռը երկկարգ շարուած երգումէին քաղցրաձայն: Նորին Բարձր Սրբազնութիւնը Միաբանակոն Ուխտի հետ միասին անցնելով

ձեմարանի աշակերտաց եւ ուսանողաց երկկարգի միջով՝ կանգառաւ հանգուցեալ Հայրապետի գերեզմանի մօտ ու «Հոգ—ոց» կարգաց եւ մոնելով Տաճարը աղօթեց Ս. Իջման տեղւոյ Սեղանոյ առաջ եւ անտի միաբանից ուղեկցութեամբ գնաց Իւր համար նախապէս պատրաստած բնակարանը:

Նորին Բարձր Սրբազնութիւնն Ազգիս հանգուցեալ Հայրապետի առաջարկութեամբ եւ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ կամօք հաստատուած է Ս. Սինոդի Փոխ—Ատենապետ եւ Էջմիածնի ամենայն Հայոց Կաթուղիկոսական Տեղակալ:

Պէտք է խոստովանել, որ ներկայումս, երբ ամենայն Հայոց Հայրապետական Գահը թափուր է իւր Գահակալից եւ Ազգը իւր Հոգեւոր Պետից, մի այսպիսի խոհական եւ բազմափորձ բարձրաստիճան Արքեպիսկոպոսի ներկայութիւնը Մայր Աթոռոյս մէջ՝ անհրաժեշտ էր: Մայր Աթոռոյս եւ նորա ձեմարանի բարոյապէս եւ նիւթապէս բարւոք դրութեան մէջ վերածելու եւ պահպանելու ծանր հոգը մէկ կողմից՝ Ազգային—եկեղեցական եւ դպրոցական գործոց բարեկարգութեան բազմատեսակ անհրաժեշտ պահանջները միւս կողմից՝ արդարեւ Գերապատիւ Սրբազան Հօր գործունէութեան ասպարիզի մէջ մեծամեծ դժուարութիւններ են ներկայացնում, բայց եւ այնպէս Նորա ամեն դէպքերում եւ ամեն գործառնութեանց մէջ արտափայլած խոհականութիւնն ու կառավարչական ոգին իրաւունք է տալիս մեզ յուսալու, որ Նա Իւր միւս անդամակից Սրբազան Հարց Ատենակալաց ջերմ եւ անկեղծ աջակցութեամբ կյաղթէ ամենայն դժուարութեանց եւ դէպ յառաջ—ի բարեփոխութիւն մղելով Ինքեան հաւատացեալ ամենայն վերոյիշեալ գործոց կառավարութեան ղեկը, կպսակէ Էջմիածնի Միաբանական Ուխտի եւ համայն Ազգի Իւր վերայ խարսխեալ յոյսն ու ակնկալութիւնը:

Ատրախանաբնակ մեր սիրելի Ազգայիններից Ցարգելիք ոմանք նուիրեցին յօգուտ Մայր Աթոռոյ Գ. ձեմարանի Էջէ+ Հաբէ-ր ը—Բ-Լէ ձեռամբ Բարեկ. Մելքիսեդէկ քահանայի Քալանթարեանց, որոց անուններն ու նուիրատաց քանակութեան ցուցակը՝ հրատարակելով՝ խորին շնորհակալութիւն կյայտնեմք թէ

Նուիրատու Ցարգելեաց եւ Թէ յիշեալ քահանային՝ գովելով նոցա փոյթն ու եռանդը ազգային լուսաւորութեան գործում:

	ր.
Կիրակոս Գաբրիէլեան Աղամջանեանց	25
Այրի Շուշան Մելքոնեան Փրանգիւլեանց	25
Սարգիս Ստեփաննոսեան Աւետեանց	10
Յովսէփ Սիմէոնեան Երուսաղեմեանց	10
Յովակիմ Յովհաննիսեան Արգարեանց	10
Գէորգ Խաչատրեան Կիրէյեանց	10
Գալուստ Գէորգեան Պարտնովեանց	10
Խաչատուր Աւետիսեան Լալայեանց	10
Յովսէփ Գալստեան Աստուրեանց	10
Աւետիս Գալստեան Աստուրեանց	10
Գալուստ Յարութիւնեան Քորջայեանց	10
Յովհաննէս Սարգսեան Աւագեանց	10
Աստուածատուր Գալստեան Աստուրեանց	10
Խաչատուր Յովհաննիսեան Արգարեանց	10
Այրի Աննա Դանիէլեան Անդրէասեանց	10
Մկրտիչ Ամբակումեան Բուրջալեանց	10
Զաքարիաս Մկրտչեան Սուրաբէկեանց	10
Սիմէօվն Մկրտչեան Սուրաբէկեանց	10
Համբարձում Յովակիմեան Կուլումեանց	10
Գրիգոր Կարապետեան Պոպովեանց	10
Գէորգ Մկրտչեան Տէր—Սիմէովնեանց	10
Եսայիաս Խաչատրեան Կիրէյեանց	10
Յովհաննէս Կարապետեան Կոստինցեանց	10
Գրիգոր Յովակիմեան Բայեանց	10
Դանիէլ Յարութիւնեան Փրանգիւլեանց	10
Ծաղիկ Պետրոսեան Կիրէյեանց	10
Յովհաննէս Յակովբեան Փրանգիւլեանց	10
Ընդ ամէնն՝ երեք հարիւր րուբլի արծաթղ	300 ր·

Օրբագարում բնակուող մեր սիրելի Ազգայիններից Ցարգելիք ոմանք յօգուտ մայր Աթոռոյս Գ. Ճեմարանի նուիրեցին հարիւր տասն և հինգ րուբլի, որոց անուանքը եւ նուիրանաց որքանութեան ցուցակը հրատարակելով կմատուցանեմք մեր հրապարակական գոհունակութիւնը:

	ր.
Վաղարշակ Սարգսեան Խորոսանով	10
Ղազարոս Յակովբեան	10

Անդրէաս Հալաճեանց	20
Եղիա Պետրոսեան Զուպարեանց	15
Պետրոս Եղիայեան Զուպարեանց	10
Մարգարայ Մելքոնեանց	10
Գէորգ Պետրոսեան	10
Մարտիրոս Օգսէնտեան Ծուռվզեանց	10
Խաչուկ Իշխանեանց	10
Սարգիս Մարտիրոսեան Սատամբոլեանց	10
Յովսէփ Տապաղեանց	10
Ներսէս Գաբրիէլեան Մազլումեանց	10
Բաղդասար Մելքոնեան	10
	115

Մեծապատիւ Հայազգի Պարոնայք — Նադվորնի՝ սովետնիկ Մովսէս բէկ Մատուրեանց, Տիտուլեարնի սովետնիկ Անտոն Քանանեանց եւ Ախալքալակաբնակ Բարսեղ Մ. Փարաքասիկիանցեանց նուիրեցին յոգուտ Մայր Աթոռոյս Գ. ձեմարանի առաջինը՝ պատնէշն ըռ-Էլէ՝ իսկ վերջինը հինգ ռուբլի. որոց մատուցանումենք մեր հրապարակական խորին շնորհակալութիւնը:

Երեւանայ նահանգի Հայ ծխական դպրոցաց թեմական Տեսչի պաշտօնակատար Պ. Պոլշեանցը գրում է մեզ:

«Սիւնեաց գաւառի Բռնակոթի գիւղի ժողովրդականների մէջ ծագել էր միտք մի քանի տարի սրանից յառաջ՝ կազմել ընկերութիւն տեղական բերքեր ժողովելու և ապագայում մի հայ ծխական դպրոցի շինութեան ձեռք տալու։ Երջանկայիշատակ Տէր Գէորգ Գ. Կաթուղիկոսը իւր օրհնութեան կոնդակաւը վաւերացրել էր տոմարը և գործը։»

«Ժողովել էին բաւականաչափ ցորեան և փող։»

«Անցեալ 1882 թուի ամառը Բռնակոթում կարգադրեցի սկսել գործը, և ահա ներկայումս ուսումը շարունակվում է եկեղեցու բակում եղած մի սենեկի մէջ, իսկ առաջիկայ գարնան համար պատրաստած է նիւթ՝ նոր դպրոցի շինելու համար ձեռք տալու։»

«Այժմ Բռնակոթի հոգաբարձութիւնը ուղարկելով ինձ նուիրատուաց ցուցակը, խնդրում է իմ միջնորդութիւնը Ամենագթիդ միջոցաւ հրատարակելու ի գիտութիւն և ի խրախոյս նուիրողաց և այլոց։»

«Ցոյս ունիմ, որ Խմբագրութիւնդ ուրախութեամբ կը յարգէ Բռնակոթցւոց խնդիրը և իւր թերթերում կը զետեղէ հետեւեալը։»

Պաշտօնակատար թեմական տեսչի Պ. Պոլշեանց։ Ի 1 ն Մարտի 1883։

Անուանք Նախիջևանցւոց, որք վճարել են.

	Մ.	Կ.
Մակար Բալիեանց	1	
Յովսէփ մահտեսի Յովհաննիսեանց		50
Պօղոս Եղիեանց		40
Գէորգ Տէր Ստեփանեանց	1	
Յովսէփ Մխիթարեանց		60
Յովակիմ Յովսէփեանց		60
Սերեբրեակով	1	
Յովհաննէս Գիւլնազարեան Խնձորեսկցի . . .	2	
Աւետիք Դաւթեանց Աղբեացի	1	
Յարութիւն Տէր Գաբրիէլեանց	2	
Մովսէս Մարգարեանց Ուզ գիւղացի . . .	2	
Գալուստ Յովհաննիսեանց Ալէլուեցի . . .		30
Խաչատուր Մ. Թարվէրդեանց		45
Խասադիւլ մահտեսի Աղայեանց	1	
Նազլուխան Ալիխանեանց	1	
Սանամ Գրիգորեանց	1	
Ներսէս Տէր Գաբրիէլեանց	1	
Անթառամ Յովհաննիսեանց	1	
Յովհաննէս Գրիգորեանց	2	
Եփրեմ Աթալեանց ուսուցիչ տեղւոյն . . .	2	

Ապարանք

Յովհաննէս վարդապետ Ղալամեանց . . .	50	
Առաքել Ուրեասեանց	2	
Մկրտիչ քահանայ Մարգիեանց	1	
Ընդ ամենն	74	85

Նախիջևանու ցուցակն

	Մանէթ	Կոպէկ
Ջաւադ բէգ մէլիք Թանգիեանց	2	
Մինաս Ղազարեանց	2	
Իսախան Այգինեանց	1	1
Օհան Գրիգորեանց	1	3
Սիմէօն Մաժլումեանց		3
Ղօրխմազ Էլլեզբարեանց		4
Գրիգոր Հայրապետեանց		3
Բաղդասար Տէր Մկրտչեանց	1	1
Ղազար Օհանեանց	2	
Մկրտիչ Շահգեալդեանց		5

Բաբաջան Հայրապետեանց		3
Յովհաննէս Զաքիեանց		4
Ամիրջան Ոսկանեանց		4
Վլաս Տէր Ստեփանեանց	2	
Գրիգոր Քօչարեանց	2	
Խաչատուր Ղազարեանց		4
Նազլուխան Բարշամեանց	1	
Յովակիմ Մկրտչեանց	1	
Ստեփան Գրիգորեանց	1	
Խաչի Մարտիրոսեանց		3
Վանի Ռոստոմեանց		2
Խանում Մէլիք Թանգեանց	1	
Հռիփսիմէ Ասրիբէգեանց		3
Սիմէօն Սահակեան	1	
Մկրտիչ Ղարագեօզեանց	1	
Գրիգոր Մատթէոսեանց		3
Բէգլար Բէգ Մէլիք Թանգիեանց		2
Խաչի Մէհրաբեանց	1	
Ալիշ Բէգ		2
Պետրոս Գրիգորեանց	1	
Բաբաջան Ահագիրով	1	3
Բաբաջան Պօղոսեանց	1	
Սուլէյման Մանուչարեանց		2
Գէորգ Յովսէփեան		1
Փիլիպպոս Մ. Ահայեանց		2
Աբրահամ Բաղալեանց	1	
Առաքել Դաւթեանց	1	
Սարգիս Տէր Ներսիսեանց		3
Յովհաննէս Տէր Ներսիսեանց		3
Բաբայ Յովհաննիսեան		3
Ղուկաս Քամխարով		2
Ենոք Մանուչարեանց	1	
Յովսէփ Յովհաննիսեանց Լորեցի	1	
Ստեփան Բէգ Մէլիք Թանգիեանց	4	
Հռիփսիմէ Մէլիք Թանգիեանց	2	
	44	3

Արարատի ընթերցողաց ուշադրութիւնը դարձնելով անցեալ Յունվար եւ Փետրվար եւ ներկայ Արարատի ամսատետրերում հրատարակած Արժանապատիւ Յուսիկ վարդապետի «իմ նկա-

տողութիւնները» վերնագրով յօդուածի վերայ՝ խնդրումենք Արժանապատիւ Յաջորդներից, Գաւառաց Գործակալներից եւ Հայոց Հոգեւոր ծխական դպրոցների թեմական Տեսուչներից՝ որ իւրեանց պաշտօնական ճանապարհորդութեանց ժամանակ հաճին նոյնօրինակ տեղագրական եւ վիճակագրական նկատողութիւններ գրել եւ հասցնել Խմբագրութեանս ի հրատարակութիւն, յաւելացնելով իւրեանց նկատողութիւնների վերայ եւ իւրաքանչիւր տեղւոյ ժողովրդեան սովորութիւնները, տեղական արհեստները եւ նոցա արհեստական արտադրութիւնները, որով մեծ ծառայութիւն արած կլինին հայրենագիտութեան եւ ժողովրդական կեանքին վերաբերեալ ներկայ գրականութեան ճիւղերին:

Ի նկատի ունելով այն ամեն յաջող միջոցները եւ յարմարութիւնները, որոնք ունին նոքա իւրեանց ճանապարհորդութեան ժամանակ, կյուսանք որ մեր այս հրաւէրը չի մնալ «ձայն բարբառոյ յանապատի:»

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՑԽԱՑԻՑ.

Վեհանձն և բարեպաշտ մահտեսի Վարդան աղայն Վարդանեանց՝ որ իւր մեծագործութիւններովն՝ յայտնի է արդէն, ինչպէս Ռուսահայոց, նոյնպէս և Տաճկարնակ Ազգայնոց մեծ և երևելի մասին, չկարողանալով չափաւորել իւր արդի ազգասիրական բաղձանքն՝ ինչպէս սրբոց Վարդանանց զօրավարաց անունով կառուցած եկեղեցիով, նոյնպէս և հայազգի որբ և աղքատ տղայոց ձրի դաստիարակութեան համար բացած վարժարանովն՝ հաճեցաւ Աղջկանց մի ուսումնարան ևս կառուցանել, որպէս և արդէն կառոյց նոյն իսկ Եկեղեցւոյ և ուսումնարանի պարսպաց միջին գծի վերայ, որ տարածուած է հիւսիսային թևէն դէպի արևմուտք, ճակատը՝ ուղղակի հիւսիսին պարզած, այնպէս որ տղայոց դպրոցը՝ մի և նոյն գծին ուղղութեամբ՝ հաստատուած է՝ արևելեան կողմը եղած ապառաժուտ դաշտաբլուրի յատակագծին վերայ. իսկ գմբեթազարդ հոյակապ Եկեղեցին, որ շինուեցաւ նոյն իսկ դաշտաբլրի բարձր գագաթան վերայ իւր հոգևոր զաւակունքը — Եղբայր և Քոյր, երկու քաղցրամունչ աղաւնիք — «Վարդանեան» Ուսումնար. ու «Շուշանեան» դպրոցը, կարծես թէ՝ իւր թևերուն հովանիին տակն առած՝ կ'պատսպարէ, կ'խնամէ, ու կ'առաջնորդէ նոցա Քրիստոսեան ուղիղ բարոյականութեամբ՝ նաւարկելով մարդկային կենաց մրրկածուփ ծովու ալիքներէն՝ հասնել անդորր նաւահանգիստը. և հետևարար,